



«Հիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամ
Ք. Երևան 0009, Կոյունի 19ա, ք. Հիլիջան 3905, Մոլդովական 77
Հեռ.՝ +374 268 2 37 99, +374 94 54 37 07
Էլփոստ՝ welcome@dcs.am
Կայքէջ՝ www.dcs.am

Հայոց լեզվի և գրականության ուսուցիչ

[«Հիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամ](#)

Մոլդովական 77, ք. Հիլիջան, Հայաստան

Դիմումների ընդունման վերջնաժամկետ՝ 13.05.2018 թ.

Աշխատանքը Հիլիջան քաղաքում է: Թափուր աշխատատեղը երեխայի ինամքի արձակուրդում գտնվող ուսուցչի փոխարինման համար է:

Աշխատանքի սկիզբը 2018 թ.-ի սեպտեմբերի 1-ն է

Մասնագիտական և անձնային պահանջներ

Մեզ կարող են դիմել **բոլոր այն ուսուցիչները**, ովքեր բավարարում են հետևյալ չափանիշներին.

- ունեն լեզվաբանության, մանկավարժության (լեզուների դասավանդում), հայոց լեզվի ու գրականության մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում.
- ունեն հիմնավոր գիտելիքներ դասավանդվող առարկայից և տիրապետում են այն դասավանդելու գործնական հմտություններին ու արդի տեխնոլոգիաներին.
- մշտապես կատարելագործում են իրենց մասնագիտական և մանկավարժական կարողությունները՝ հետևելով մասնագիտական և մանկավարժական նորարարություններին ինչպես արտերկրում, այնպես էլ Հայաստանում.
- ուսուցչությունը համարում են իրենց կոչումը, իսկ կրթությունը՝ ոչ միայն անձ ձևավորելու, այլ նաև Հայաստանի ապագան կերտելու գրավական.
- ունեն ուսումնական հաստատությունում դասավանդելու առնվազն 1 տարվա փորձ.
- մանկավարժական գործունեություն իրականացնելիս ցուցաբերում են ստեղծագործական մոտեցում, վերլուծական մտածելակերպ և չեն խուսափում նորարարություններից.
- մասնակցում են ներդպրոցական և դպրոցի նախաձեռնությամբ ստեղծված ցանցային մասնագիտական միջոցառումներին՝ ժամանակին արձագանքելով Էլեկտրոնային հաղորդակցությանը.
- տիրապետում են իրենց աշխատանքի համար անհրաժեշտ համակարգչային ծրագրերին (օր.՝ Microsoft Office և այլն).
- գերազանց տիրապետում են հաղորդակցման հմտություններին (գրավոր և բանավոր).
- կարողանում են ոգևորել երեխային.
- բավարար տիրապետում են անգլերենին (գրավոր և բանավոր).
- տիրապետում են ժամանակի կառավարման հմտություններին.
- համոզված են, որ իրենց համար երբեք ուշ չէ սովորել:

Դիմելու կարգ

Բոլոր թեկնածուներին խնդրում ենք vacancy@dcs.am Էլ. հասցեին ուղարկել՝

1. ինքնակենսագրություն (CV),
2. Նամակ-հիմնավորում «Ինչու՞ եմ ուզում դառնալ ուսուցիչ Դիլիջանի կենտրոնակա դպրոցում» թեմայով (մեկ էջից ոչ ավելի),
3. դասավանդման, դասարանի հետ աշխատանքի վերաբերյալ սեփական մոտեցումների ու առաջնահերթությունների **հակիրճ** ներկայացում (նշված ձևաչափերից որևէ մեկով՝ MS Word, Power Point, Adobe PDF, Flash, Video և այլն):

Բոլոր փաստաթղթերը խնդրում ենք ուղարկել **միայն հայերեն**: Նամակի բովանդակության տողում նշեք պաշտոնի անունը՝ **Armenian Language Teacher**:

Հայտերն ընդունվում են մինչև 13.05.2018 թ. ներառյալ: Ընտրված թեկնածուների հետ կապ կհաստատենք անձամբ՝ ընտրության հետագա փուլերը քննարկելու նպատակով: Խնդրում ենք չզանգահարել մեզ:

Կազմակերպության մասին

Դիլիջանի կենտրոնական դպրոցը ստեղծվել է 2013 թվականին [«Այբ» կրթական հիմնադրամի](#) կողմից՝ ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) հետ համագործակցության արդյունքում: Այն հիմնական դպրոց է՝ նախատեսված է 1-9-րդ դասարանցի մինչև 160 աշակերտի համար:

Դիլիջանի կենտրոնական դպրոցը «Այբ»-ի իրագործած առաջին դպրոցական նախագիծն է՝ արտաքին պատվերով և ֆինանսավորմամբ: «Այբ» կրթական հիմնադրամի և ՀՀ ԿԲ համագործակցության արդյունքում ստեղծվել է դպրոցի քաղաքային մոդել՝ հասանելի ոչ միայն ՀՀ ԿԲ աշխատակիցների, այլև Դիլիջանում բնակվող այլ ընտանիքների երեխաների համար: Դպրոցում ուսանելու պայմանները նույնն են բացառապես բոլոր աշակերտների համար:

Դպրոցը «Այբ» համակարգի առաջին դպրոցն է՝ կառուցված Երևան քաղաքից դուրս: Իր գաղափարախոսությամբ ու տեսլականով, ուսումնական ծրագրով, դասավանդման մեթոդաբանությամբ ու մոտեցումներով, ուսուցիչների և աշակերտների ընդունելության քաղականությամբ դպրոցն ամբողջությամբ սինխրոնացված է Երևանի «Այբ» տարրական և միջին դպրոցների հետ: «Այբ» կրթական հիմնադրամը նաև պատասխանատու է դպրոցի կառավարման և «Այբ»-ի չափանիշներին համապատասխան ուսումնական բովանդակության վերահսկողության համար: